զոմանսն գլխատեց և զոմանս ի ցից նստոյց, և զոմանս ընկղմեց ի ջուրս. և եպիսկոպոսին գլուխն այլ ի ցից նստոյց, որ երեք օր ի ցից կանգնեցաւ։

1609 Թվ. ՌԾԸ. — Վաղճանեցաւ Միխնոյ երեցփոխան. Աստուած ողորմի իւր հոգուն։

1609–10. Թվ. ՌԾԸ. — Վաղճանեցաւ Եագուպ սարկաւագ որդի Տէր Միքայէլին. Աստուած ողորմի իւր հոգուն։

1611. Թվ. ՌԾԹ. Փետրվար Ը. օրն հինգշաբթի. Վախճանեցաւ Տէր Յովանէս աւագերէց ծեր քահանայ, և փոխեցաւ առ Քրիստոս. լաւ և բարի, հեզ և խաղաղարար և բարերար ոմն էր. այլ և էր շնորհաքն Աստուծոյ զարդարեալ, առաքինութեամբ Հոգոյն Սրբոյ. և զոր Տէր Աստուած դասակից և պսակակից արասցէ զնա ընդ սուրբ քահանայսն և ընդ արդարսն։ Եւ էր 84 ամաց. և 56 ամ քահանայութիւն արաւ ի Ս. Նիկոլա եկեղեցի, և 29 ամ աւագերիցութիւն տրաւ ի Կամէնից քաղաքն։ Աստուած ողորմի իւր հոգուն։



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ի սկզբան տպագրութեան գործոյս՝ անորոշ թողեր էինք ասոր թաթարերէն մասին հրատարակութիւնը. հիմայ ըստ հաւուրեան խնդրողաց գրոցս՝ յարեմք և զայն, ինչ կերպով որ գրած է հեղինակն, նախ՝ Տէր Յովէր, յետոյ (մեծ մասն) Ադենդ՝ որդի Տէր Գրիգորի աւագերիցու որդւոյ վերոյիշեալ Տէր Յովհաննու՝ հայերէնը գրողին։ Ադենդի պատմած թուրքաց ու Լեհաց և դաշնակցաց՝ 1621ի օգոստ. — սեպտեմ. ամսոց պատերազմը՝ իւրաքանչիւր օրուան հաղիպածներով, կը ընծայել նոր լոյս և ստոյգ տեղեկութիւններ. որովհետեւ հեղինակն շատ մասին ականատես եղած է, թէ ի բանակին և թէ ընկեր ըլլալով դեսպանաց, որով կ'իմացուի և իր խորհրդական և արժանապատիւ անձ ըլլալն, և կը ընծայ մեր յետին դարուց պատմչաց դասակցիլ։ Թուրքարէն գիտողաց՝ շատ անիմանալի չէ լեզուն, երբ լեհացի կամ օտար բառք չեն խառնուիր. երկուքին այլ հմուտ եղող մի՝ կը ընծայ դիւրաւ բոլորն այլ թարգմանել ի մեր կամ յեւրոպական ծանօթ լեզու։

Ադենդի ժամանակագրութիւնն վերջանայ 1621 նոյեմբեր ամսոյ յիշատակաւ. անկէ ետեւ քանի մի կոտոր թաթարերէն և յետոյ հայերէնն՝ երեսուն տարի վերջը ուրիշներ գրած են։

Թողլով ուրիշ բառերը, շաբաթուան օրերու անուններըը՝ ստէպ յիշուելնուն համար՝ նշանակեմք. Եբխդուն՝ Կիրակի օր. — Եբխաշդուն՝ Երկուշաբթի. — Նօկար գուն՝ Գշբթի. — Խայլն գուն՝ Դշբթի. — Գիչայնա գուն՝ Եշբթի. — Այնա գուն՝ Ուրբաթ։